

Արձանագրություն N°7/2019-2020

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2019թ. դեկտեմբերի 19-ին տեղի ունեցած թիվ 7 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 68-ը (վաթսունոթը):

Նիստը նախագահում էր ռեկտորի ժ/պ Գ. Գ. Գևորգյանը:

Ռեկտորի ժ/պ Գ. Գ. Գևորգյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. Դոցենտի գիտական կոչումների շնորհում (զեկ.՝ ԳԽ մրցութային հանձնաժողովների նախագահներ Ն.Ն. Մարտիրոսյան, Խ.Վ. Ներկարարյան):
2. «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի կառուցվածքային փոփոխությունների մասին (զեկ.՝ Բանբեր Երևանի համալսարանի հանդեսի գլխ. խմբ. Լ.Վ. Ավետիսյան):
3. Հաղորդում ԵՊՀ 2020թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) մասին (զեկ.՝ գլխ. հաշվապահ Ռ.Գ. Գրիգորյան):
4. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հաշվետվությունը 2018-2019 ուստարվա գործունեության մասին (զեկ.՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա.Հ. Մակարյան):
5. ԵՊՀ թվային անալիզի և մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտ, ֆ.ս.գ.դ. Ռ. Խաչատրյանի «Օպտիմիզացիայի մեթոդներ» աշխատանքը որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին:

Ընթացիկ հարցեր

- 6.1. ԵՊՀ ՈԻԳԸ նախագահի ընտրության մասին:

Օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց, և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Մինչ օրակարգային հարցերին անցնելը ռեկտորի ժ/պ Գեղամ Գևորգյանը տեղեկացրեց, որ ԵՊՀ ԻԿՄ ֆակուլտետի թիմը տպավորիչ արդյունքներ է գրանցել «ICPC» ծրագրավորման հեղինակավոր միջազգային օլիմպիադայում՝ անցնելով

եզրափակիչ փուլ: Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան Վահրամ Դումանյանը նշեց, որ մրցույթը տվյալ բնագավառում միջազգային ամենաբարձր ու հեղինակավոր հարթակն է, և օլիմպիադային մասնակցող աշխարհի 3300 համալսարանների շարքում ԵՊՀ-ն գտնվում է 130-ի մեջ: «ICPC» միջազգային օլիմպիադայի ԵՊՀ թիմի անդամներ Համլետ Միաքելյանը, Լևոն Մուրադյանը և Խաժակ Գալստյանը պարգևատրվեցին ԵՊՀ ոսկե մեդալով:

1. Լսեցին. - Դոցենտի գիտական կոչումների շնորհման մասին:

Հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ն. Ն. Մարտիրոսյանը և բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Խ. Վ. Ներկարարյանը ներկայացրեցին դոցենտի կոչման հավակնորդների մասին ամփոփ տվյալներ:

Դոցենտի կոչման հավակնորդներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Սուջյան Սերոբ Արամի	սոցիալ-տնտեսական աշխարհագր. ամբ. ասիստենտ
2.	Սահակյան Ալբերտ Եփրեմի	Ֆարմաքոնոլոգիայի և ֆեկ-ի ամբ. ասիստենտ
3.	Թաջարյան Իվետ Նորայրի	հայ արվեստի պատմության և տեսության ամբ. ասիստենտ

Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գ. Գևորգյանի առաջարկով կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ անդամներով՝

1. Հակոբյան Լևոն (նախագահ)
2. Հովհաննիսյան Արամ
3. Պետրոսյան Վահե

Կազմակերպվեց փակ, գաղտնի քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 68 անդամներից 68-ը: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Լ. Հակոբյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

Դոցենտի կոչում շնորհելու համար անցկացված քվեարկության արդյունքներն էին .

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Սուջյան Սերոբ Արամի	67	1	0
2.	Սահակյան Ալբերտ Եփրեմի	66	2	0

3.	Թաջարյան Իվետ Նորայրի	66	2	0
----	-----------------------	----	---	---

Որոշեցին - Դիմել ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն որակավորման կոմիտե՝ դոցենտի կոչում շնորհելու վերաբերյալ ԵՊՀ գիտական խորհրդի որոշումը հաստատելու միջնորդությամբ:

2.Լսեցին.- «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի կառուցվածքային փոփոխությունների մասին: «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի գլխավոր խմբագիր Լևոն Ավետիսյանը ներկայացրեց առաջարկվող փոփոխությունները, ըստ որոնց՝ նախատեսվում է «Բանբեր Երևանի համալսարանի. Ռուս բանասիրություն» և «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն» շարքերի պարբերականությունը դարձնել տարեկան երկու համար, իսկ «Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն» շարքը տարանջատել և հրատարակել առանձին շարքերով: Ռեկտորի Ժ/պ Գ. Գևորգյանը նշեց, որ պարբերականության կրճատման նպատակը պայմանավորված է հրատարակվող հանդեսների որակի բարձրացման հանգամանքով՝ առաջարկելով նաև «Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա» շարքի պարբերականությունը ևս սահմանել տարեկան 2 համար:

Որոշեցին.- «Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն» գիտական հանդեսից առանձնացնել «Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա» շարքը: «Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա», «Բանբեր Երևանի համալսարանի. Ռուս բանասիրություն», «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն» շարքերի պարբերականությունը սահմանել տարեկան 2 համար:

3.Լսեցին.- Հաղորդում ԵՊՀ 2020թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) մասին: Գլխավոր հաշվապահ Ռ. Գրիգորյանը նշեց, որ նախահաշիվը դեֆիցիտային է, որը կազմում է 150 մլն դրամ, սակայն դա պայմանավորված է ոչ թե ավել ծախսերի պլանավորմամբ, այլ նախորդ տարիներին դրամաշնորհային ծրագրերով ստացված ֆինանսավորմամբ և հաշվետու տարում նախատեսվող ծախսերի կատարմամբ: 2019թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ գործող թվով 25 դրամաշնորհային պայմանագրերի հաշվարկով 2020թ. նախատեսվող ծախսերը 378 մլն դրամով գերազանցում են ակնկալվող ֆինանսավորմանը: Այդ պայմանագրերից երկուսում նախատեսվում է նաև ԵՊՀ-ից համաֆինանսավորում: Համախառն եկամուտները նախորդ տարվա համեմատ նվազելու են շուրջ 1 տոկոսով, որը կազմում է 90 մլն դրամ: Այն վերաբերում է ԵՊՀ հիմնական գիտակրթական գործունեությանը, որից 57 մլն դրամի նվազումը կապված է հեռակա ուսուցմամբ և օտարերկրյա ուսանողների թվի կրճատմամբ: 2020-2021 ուստարվա ընդունելությամբ բակալավրի կրթական ծրագրով վճարովի համակարգում ևս նախատեսվում է նվազում 265 ուսանողով, իսկ պետական ֆինանսավորմամբ տեղերի նվազում նախատեսված չէ: Նախահաշվի համախառն եկամուտների նկատմամբ ուսման վարձավճարներից եկամուտները կազմում են շուրջ 58 տոկոսը: Իրական ազդեցություն կունենար ուսանողների թվով պայմանավորված եկամուտների նվազումը, որի պատճառով նախատեսվում է 2020-2021 ուստարվա ընթացքում ուսման

վարձաչափերը բարձրացնել միջինը 15 տոկոսով: Բարձրացման արդյունքում նվազագույն վարձի չափը կազմելու է 500 հազար դրամ՝ գործող 430 հազար դրամի փոխարեն: Բակալավրի թվով 53 կրթական ծրագրերից 28 վարձաչափերը նվազագույն են, իսկ առավելագույնը՝ 1 մլն դրամ միայն մեկ մասնագիտության գծով է: Կան մասնագիտություններ, որոնց ուսման վարձի չափերի փոփոխություն չի նախատեսվել: Ուսման վարձավճարներից նախատեսվող եկամուտները հաշվարկելիս հաշվի է առնվել 400 մլն դրամի չափով ուսման զեղչերի տրամադրումը: 2018-2019 ուստարում տրամադրվել է 404 մլն դրամի զեղչ 2780 ուսանողի: Նրա ներկայացմամբ՝ գիտական ու գիտատեխնիկական ծրագրերը նվազել են 18 տոկոսով, որը պայմանավորված է թեմատիկ պայմանագրային գիտական ծրագրերով: 2020թ. ֆինանսավորումը հաշվարկվել է միայն 2019թ. սկսված և 2020թ. ավարտվող ծրագրերի մասով: Իսկ նոր թեմատիկ ծրագրերի համար Գիտության պետական կոմիտեի կողմից հայտարարվելու են մրցույթներ, որից հետո պարզ կդառնա թեմատիկ ծրագրերի ֆինանսավորման չափը: Հետևաբար հնարավոր է նաև, որ նախատեսվող նվազումը լինի ավելի քիչ: Հաջորդ նվազումը պայմանավորված է «Հավելավճարներ բարձր արդյունավետություն ցուցաբերած գիտաշխատողներին» ծրագրով, այն ավարտվել է 2019թ., իսկ 2020 թ.-ի համար կանխատեսումներ չունենք: 2020 թ.-ին նախատեսված չեն նաև սփյուռքագիտության ոլորտում գիտական կադրերի պատրաստման, արտերկրում հայոց լեզվի դասավանդման ծրագրերի համար ֆինանսավորումները, որոնք 2019թ. ևս ԵՊՀ-ի միջոցով չեն իրականացվել: Պետական բյուջեից ֆինանսավորման ծավալը համախառն եկամուտներում կազմում է 29 տոկոս, որից 21 տոկոսը վերաբերվում է կրթական գործունեությանը, իսկ 8 տոկոսը՝ գիտական: Կրթական ծրագրերի մասով անհրաժեշտ է նշել, որ մեկ ուսանողի համար նպաստի ֆինանսավորման չափը 2019թ. համեմատ չի փոփոխվել, որը կազմում է 640 հազար դրամ: ԵՊՀ-ում վճարովի համակարգում սովորող թվով 1230, որից 302-ը Իջևանի մասնաճյուղի ուսանողների ուսման վարձերը մասնակի, կամ 100 տոկոսով ևս ֆինանսավորվում են պետական բյուջեի միջոցներից որպես սոցիալապես անապահով, սահմանամերձ բնակավայրերի, արտոնություն ունեցող ուսանողների, 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ մարտական հերթապահություն իրականացրած, «Պատիվ ունեմ» ծրագրին մասնակցող ուսանողների: Ռ. Գրիգորյանը նշեց, որ կանոնադրությամբ նախատեսված այլ գործունեություն մասով եկամուտները գնալով ավելանում են, որոնք միասին վերցված կազմում են համախառն եկամուտների շուրջ 13 տոկոսը: Դրանցից մարզասրահի և ուսանողական հանրակացարանի ծառայությունները, որոնք միասին կազմում են 100 միլիոն դրամ, իսկ նախկինում՝ 4-5 միլիոն դրամ, պայմանավորված են վերջին տարիներին կատարված մեծածավալ ներդրումներով (հիմնանորոգում, կահավորում): 2020թ. նախատեսվում է նաև ուսումնաարտադրական բազաներում կատարել ներդրումներ, որի արդյունքում Ծաղկաձորի և Բյուրականի բազաներից նախատեսվող եկամուտները ավելացվել են: Լրացուցիչ կրթական ծառայություններից եկամուտները նախատեսվում է 105 միլիոն դրամ և ավելացել է նոր՝ «Օտար լեզուների դասընթացներ» ծրագիրը: Դրամաշնորհային ծրագրերը ևս ավելացել են և կազմում են ընդհանուր եկամուտների շուրջ 5 տոկոսը, կամ 500 միլիոն դրամ: Բանկերից ստացվող տոկոսային եկամուտները կազմում են ավելի քան 3 տոկոսը, կամ 300 միլիոն դրամ:

Արտահայտվեցին.- ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ Վահե Հովհաննիսյանն ասաց, որ օպտիմալացմանն ուղղված առաջարկությունները, որոնք ենթադրում են կառուցվածքային փոփոխություններ, քննարկվել են նաև իրենց ֆակուլտետի անձնակազմի հետ հանդիպման ժամանակ: Ըստ նրա՝ բարեփոխմանը և գործունեության արդյունավետությունը բարձրացնելուն միտված գործողություններ պետք է կատարել, սակայն դրանք պետք է կյանքի կոչել միայն այն դեպքում, եթե առկա է հստակ ծրագիր, ինչպես նաև դա իրականացնելու համար Հոգաբարձուների խորհրդի կողմից տրված մանդատ: Ըստ նրա՝ այդ գործողությունները դուրս են օպերատիվ կառավարումից և խնդրահարույց իրավական տեսանկյունից, քանի որ ժամանակավոր պաշտոնակատարն այդպիսի գործողություններ կատարելու մանդատ չունի: Պետք է մշակել ծրագիր, որին հավանություն կտա ՀԽ-ն: Բացի դրանից՝ վերջինս պետք է ընտրի անձին, որը կյանքի է կոչելու այդ ծրագիրը: Ռեկտորն էլ պետք է հաշվետու լինի ՀԽ-ին: Ի պատասխան՝ ռեկտորի ժ/պ Գեղամ Գևորգյանը փաստեց, որ դեռևս միայն հնչել է առաջարկություն՝ մտածելու, թե ինչ կարելի է անել և առաջարկը կառուցվածքային փոփոխությունների մասին չէր, այլ այն մասին, որ տարիների ընթացքում առաջացել է անհավասարակշռություն: Այժմ դասախոսների թիվը կրճատվել է, իսկ մյուս անձնակազմերի թիվը մնացել է նույնը: Եթե պետք է այս ձևախեղված հարաբերակցության պայմաններում բարձրացվեն բոլորի աշխատավարձերը, ապա դա անարդար է: Բացի դրանից՝ նա ասաց, որ եթե հանգում են որևէ եզրակացության՝ համարելով ռացիոնալ, ապա կարող են այն իրականացնել ցանկացած ռեկտորի պաշտոնավարման ընթացքում՝ նշելով, որ որոշումը կայացնելու է կոլեկտիվը, իսկ ինչ վերաբերում է լիազորություններին, ապա ռեկտորի պաշտոնակատարն ունի ռեկտորի բոլոր լիազորությունները»: Արևելագիտության ֆակուլտետի դեկան Ռուբեն Մելքոնյանը հետաքրքրվեց, թե վերանայվել է արդյոք իրենց ֆակուլտետի գործուղումներին հատկացվող բյուջեն, և նշեց, որ համաձայն է հնչեցված մտահոգությունների հետ՝ նշելով համալսարանում կառուցվածքային վերամիավորումների տեսլականի ու մոտեցումների մասին: Որպես արձագանք ռեկտորի ժ/պ Գեղամ Գևորգյանն ասաց, որ գործուղումներին հատկացվող բյուջեն չի վերանայվել, բայց փոխարենը հորդորել է դրամաշնորհային ծրագրերի ֆինանսավորումից հատկացնել գործուղումներին:

Որոշեցին.- ԵՊՀ 2020թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի մասին հաղորդումն ընդունելի գիտություն:

4.Լսեցին. – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2018-2019 ուստարվա գործունեության մասին: Մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը նշեց, որ 2018-19 ուստարվա կարևորագույն ձեռքբերումը մասնաճյուղում իրականացվող կրթական ծրագրերի վերջնարդյունքների վերանայումն էր և նորացված ծրագրերի հաստատումն էր: ԻՄ-ը իրականացնում է ոչ միայն կրթական և գիտամշակութային գործառնություններ, այլև սահմանապահի դեր է կատարում Հայաստանի Հանրապետության համար և իր գործունեությամբ նպաստում է սահմանամերձ Տավուշի մարզի տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի զարգացմանը: Նա իր լինելության 25-ամյա ճանապարհին կրթել և կյանք է ճանապարհել շուրջ 6000 շրջանավարտ, որոնք անփոխարինելի դերակատարում ունեն մարզի զարգացման բոլոր ոլորտներում:

Մասնաճյուղի գործունեությունն իրականացվում է նրա՝ 2016-20 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի հիման վրա, որում կարևորվում է կրթության որակը և նրա շարունակական բարելավումը: 2018/19 ուստարվա կարևորագույն ձեռքբերումը մասնաճյուղում իրականացվող մասնագիտությունների կրթական ծրագրերի վերջնարդյունքների վերանայումն էր և նորացված ծրագրերի հաստատումը: Մասնաճյուղի 6 կրթական ծրագրեր արտաքին փորձաքննություն են անցել ԵՊՀ համապատասխան ֆակուլտետներում, «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագիրը՝ Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնում, իսկ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» ծրագիրը՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում: Արտաքին փորձագետների դրական կարծիքների հիման վրա այդ կրթական ծրագրերը հաստատվել են մասնաճյուղի գիտական խորհրդում: Փորձագետների առաջարկների հիման վրա ամբիոններում՝ կրթական ծրագրի ղեկավարների և համապատասխան աշխատանքային խմբերի հետ միասին վերանայվել և կազմվել են 2019-23 թթ. կրթական ծրագրերը: «Դիզայն» կրթական ծրագրի փորձաքննությունը ընթացքի մեջ է:

Մասնաճյուղն արձագանքում է տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին: 2018/19 ուստարվա ընթացքում մշակվել և ներ է դրվել նոր «Ռուսաց լեզու և գրականություն», վերաբացվել են «Հոգեբանություն» ու «Դեկորատիվ կիրառական արվեստ» կրթական ծրագրերը: Դրանց հիման վրա նոր ուսումնական տարում կազմակերպվել է ընդունելություն: Նրանցից առաջին երկուսն անցնում են արտաքին փորձաքննություն ԵՊՀ-ում:

ՀՀ Ազգային ազրարային համալսարանի հետ համատեղ՝ պլանավորվում է գյուղատնտեսական ոլորտի մի շարք կարճատև վերապատրաստման ծրագրերի իրականացում մարզի ֆերմերների և այլ գործատուների համար: Կատեղծվի նաև հողի, ջրի, անասունների կերի և գյուղմթերքների անալիզների հետազոտական լաբորատորիա, որը վճարովի ծառայություններ կմատուցի տարածաշրջանի շահակիցներին: Նրա հավաստմամբ՝ մասնագիտական կրթության կառավարման յուրահատուկ մոդելը՝ բակալավրի կրթական ծրագրի ղեկավարի «ինստիտուտը», մասնաճյուղում կայացել է և գործում է արդյունավետ: Կրթական ծրագրերի ղեկավարները իրենց աշխատանքային խմբերով մշտապես համագործակցում են գործատուների, դասախոսների և ուսանողների հետ, իրականացնում են ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերանայումներ:

Հաշվետու ուստարում մասնաճյուղի բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցմամբ 8 մասնագիտությունների 9 կրթական ծրագրերով ընդունվել է 76 դիմորդ (նախորդ ուստարվա 168-ի փոխարեն), այդ թվում՝ 39-ը անվճար, 37-ը վճարովի, իսկ հեռակա ուսուցմամբ 7 կրթական ծրագրերով՝ 40 դիմորդ (նախորդ ուստարվա 170-ի փոխարեն): Նախորդ ուստարվա համեմատ նկատվել է դիմորդների թվի զգալի նվազում առկա և հեռակա ուսուցման համակարգերում, որը պայմանավորված էր շրջանավարտների թվի նվազումով:

Մասնաճյուղի դիմորդների շուրջ 97 %-ը (103 դիմորդից 100-ը) Տավուշի մարզի դպրոցների շրջանավարտներն են: Ընդունելության համակազմի պահպանման և ընդլայնման համար մասնաճյուղը շարունակաբար ակտիվացնում է

համագործակցությունը մարզի միջնակարգ և ավագ դպրոցների հետ, ապահովում մասնաճյուղի ակտիվ գովազդարշավը: Կրթօջախը կազմակերպել է հանդիպումներ մարզի 4 ավագ և 52 միջնակարգ, Իջևանի վարժարանի, Գեղարքունիքի և Լոռու մարզերի 7 դպրոցներում: Պարբերաբար կազմակերպվել են նաև դպրոցների բարձր դասարանների աշակերտների ճանաչողական և գործնական այցեր մասնաճյուղ: Պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներն այցելել են մարզի դպրոցներ, ակնարկային դասախոսություններ կարդացել աշակերտների համար, տվել անհրաժեշտ խորհրդատվություն:

Դիմորդների հավաքագրման գործընթացում կարևոր նշանակություն ունեն հանրակրթական տարբեր առարկաների գծով ԵՊՀ-ի հետ համատեղ կազմակերպվող օլիմպիադաները: 2018/2019 ուստարում դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար 13 առարկաների գծով կազմակերպված օլիմպիադաներին մասնակցել են մարզի շուրջ 235 աշակերտներ, նրանցից 27-ը հաղթահարել է 1-ին փուլը և մասնակցել ԵՊՀ-ում կազմակերպված օլիմպիադայի 2-րդ փուլին: Տարբեր պարզևատրումներ են ստացել 20 աշակերտներ, որոնցից 2-ը արժանացել են 3-րդ կարգի դիպլոմների, 18 աշակերտ ստացել է գովասանագիր:

2018/2019 ուստարում մասնաճյուղն ունեցել է բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցմամբ սովորող 1355 ուսանող (նախորդ ուստարում՝ 1580), նրանցից 1198-ը՝ վճարովի համակարգում: Պետության կողմից ուսման վարձի (ուսանողական նպաստի ձևով) լրիվ փոխհատուցում է ստացել 116 ուսանող (այդ թվում՝ 3-ը արտամրցութային): Պետական և ներբուհական կրթաթոշակներ են հատկացվել մասնաճյուղի 101 ուսանողների, որոնցից անվանական կրթաթոշակ է ստացել 5 ուսանող: 2018/2019 ուստարում ուսման վարձի մասնակի փոխհատուցումից օգտվել է 283 ուսանող, այդ թվում՝ 106-ը առկա ուսուցման համակարգում:

2018/2019 ուստարում երկլեզու (հայերեն և անգլերեն) հավելվածով դիպլոմներ են հանձնվել մասնաճյուղի 377 շրջանավարտի, այդ թվում 154-ը՝ առկա ուսուցմամբ: Գերազանցության դիպլոմ է ստացել 22 շրջանավարտ (20-ը՝ առկա և 2-ը՝ հեռակա ուսուցման):

Մասնաճյուղի ունեցած հեղինակության և մատուցած որակյալ կրթության մասին են վկայում շրջանավարտների երախտագիտության խոսքերը և նրանց տված գնահատականները: Հարցմանը մասնակցած առկա ուսուցմամբ 124 շրջանավարտների 95%-ը բավարարված է բուհում իր ստացած կրթությունից, 94,2%-ը՝ պրոֆեսորադասախոսական կազմից, իսկ 90%-ը խորհուրդ է տալիս իր մերձավորներին և ընկերներին ընդունվել ԵՊՀ ԻՍ:

Շրջանավարտները մրցունակ են տարածաշրջանի աշխատաշուկայում, որի մասին են վկայում շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների արտահայտած կարծիքները և նրանց տված գնահատականները: 2018/19 ուստարում մասնաճյուղի շրջանավարտների վերաբերյալ իրենց կարծիքները, հարցման միջոցով, ներկայացրել են 50 շահակիցներ: Ուրախությամբ պետք է փաստել, որ նրանց 88%-ը բարձր են գնահատել մեր շրջանավարտների տեսական իմացությունը, 80%-ը՝ մասնագիտական պատրաստվածությունը, 66%-ը՝ գործնական հմտությունները, իսկ նրանց 84%-ը բավարարված է մասնագիտական միջավայրում շրջանավարտների հաղորդակցվելու

կարողություններից: Հաշվետու ուստարում 53 արտաքին շահակիցների հետ իրականացվել են հանդիպումներ, որոնց ընթացքում ձեռք են բերվել պայմանավորվածություններ թափուր հաստիքների, տեղեկատվության տրամադրման, մասնաճյուղում դասընթացների կազմակերպման, փորձի փոխանակման վերաբերյալ: Նրանց կողմից տրամադրված թափուր հաստիքների մասին տեղեկատվության շնորհիվ մասնաճյուղի 35 շրջանավարտ ձեռք է բերել աշխատանք: 2019թ. առկա ուսուցման 154 շրջանավարտներից 50-ը աշխատանքի է անցել հենց 1-ին տարում: Արտաքին շահակիցների հետ համագործակցության շրջանակներում 2018/19 ուստարում կնքվել են համագործակցության 7 հուշագրեր: Հաշվետու ուստարում ուսումնական գործընթացի բարելավման և արդյունավետ կազմակերպման համար մասնաճյուղում կատարվել են լսարանների, արվեստանոցների, լաբորատորիաների և այլ ուսումնական տարածքների վերանորոգման կամ հիմնանորոգման աշխատանքներ, կատարվել է ուսումնական տարածքների տեխնիկական վերազինում, լսարանների համար ձեռք է բերվել նոր գույք, ներդրվել է անվտանգության ժամանակակից համակարգ: 2018/19 ուստարում մասնաճյուղի աշխատակիցների աշխատավարձը բարձրացել է 15% ով, ինչի արդյունքում պրոֆեսորադասախոսական կազմի միջին աշխատավարձը կազմել է 185.554 դրամ, իսկ վարչական աշխատողների միջին աշխատավարձը՝ 169.180 դրամ, պրոֆեսորի աշխատավարձը ավելացել է 30.000 դրամով (կազմում է 220.426 դրամ), ամբիոնների վարիչների աշխատավարձը ավելացել է 15.000 դրամով: Մասնաճյուղն իր ներդրած ավանդների գծով գործող տարեկան տոկոսադրույքի ավելացման (9,5% տոկոսից 10,6%) արդյունքում ստացել է բարձր եկամուտ և ունի կայուն ֆինանսական հոսք:

Մասնաճյուղի կարևորագույն ներուժը և հաջողության հիմնական գրավականը նրա բարձրակարգ գիտամանկավարժական կազմն է: Հաշվետու ուստարում մասնաճյուղում դասավանդել են հիմնական և համատեղությամբ 118 դասախոս, այդ թվում՝ 8 պրոֆեսոր (4,3 %), 39 դոցենտ (32,2 %), 48 ասիստենտ և 34 դասախոս (63,4 %), որոնցից գիտական աստիճանով՝ 5 դոկտոր և 64 թեկնածու. գիտական աստիճան ունեցող դասախոսների հաշվեկշիռը 53,4 % է: Մասնաճյուղի դասախոսների միջին տարիքը 46 է. մինչև 35 տարեկան դասախոսների թիվը 36 է (27,9 %), 36-65 տարեկան՝ 86 (66.6 %), 65-ից բարձր՝ 7 (9,3 %): Կանայք կազմում են հիմնական դասախոսական կազմի 51,2 %-ը: 2018/2019 ուստարում մասնաճյուղն ունեցել է 1 դոկտորանտ, 2 ասպիրանտ և 3 հայցորդ: Լրիվ հաստիքային համարժեքով ուսանող-դասախոս հարաբերակցությունը կազմել է 18,6:

Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հ. Սարգսյանը հետաքրքրվեց, թե մասնաճյուղի աշխատակիցների աշխատավարձը երկրի միջին աշխատավարձից բարձր, թե ցածր է, ինչին ի պատասխան Ա. Մակարյանը նկատեց, որ աշխատավարձերը միջինից էապես ցածր են: Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ Վ. Հովհաննիսյանը հետաքրքրվեց թե արդյո՞ք մասնաճյուղը ներգրավված է ՄԱԿ-ի նորարարական ծրագրերի զարգացման «Կոլբա» ծրագրի կրթական նախագծերում և այդ ուղղությամբ արդյո՞ք աշխատանքներ իրականացվում են: Ի պատասխան՝ Ա. Մակարյանը նշեց, որ մասնաճյուղը դրանցում

ներգրավվածությունն չունի՝ ավելացնելով այդ ուղղությամբ հնարավորություններ փնտրելու շահագրգռության մասին:

5. Լսեցին. – Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, դոցենտ Ռ. Խաչատրյանի «Օպտիմիզացիայի մեթոդներ» աշխատանքը հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք ճանաչելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին հարցը:

Որոշեցին.– «Օպտիմիզացիայի մեթոդներ» աշխատանքը երաշխավորել հրատարակության և միջնորդել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝ որպես բուհական դասագիրք ճանաչելու հարցում:

6. Լսեցին.– ԵՊՀ ՌԻԳԸ նախագահի ընտրության մասին: ԵՊՀ ՌԻԳԸ նախագահ Վ. Շերենցը նշեց, որ իր լիազորությունները դադարեցնելու որոշում է կայացրել՝ արտերկիր ուսման մեկնելու և աշխատանքի առաջարկ ստանալու կապակցությամբ: Նա նշեց, որ ՌԻԳԸ խորհրդում կայացել է փակ քվեարկություն, եղել է 3 թեկնածություն, սակայն չափորոշիչներին համապատասխանել է ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ֆինանսահաշվային ամբիոնի «Ֆինանսներ» մագիստրոսական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողուհի Մերի Փանոսյանը՝ կոչ անելով վերջինիս հաստատել ՌԻԳԸ նախագահի պաշտոնում:

Որոշեցին. – Մերի Փանոսյանին հաստատել Երևանի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերության նախագահի պաշտոնում:

7. Լսեցին.– ՀՀ պետական բյուջեից գիտական ու գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ԵՊՀ ստորաբաժանումների 2019թ. հաշվետվությունները, որոնք բավարարում են գիտական և գիտատեխնիկական գործունեության շրջանակներում իրականացվող ծրագրերի հաշվետվությունների համար ներկայացվող պահանջներին:

Որոշեցին. Ընդունել գիտական ու գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ԵՊՀ ստորաբաժանումների 2019թ. հաշվետվությունները: Պրանք բավարարում են գիտական և գիտատեխնիկական գործունեության շրջանակներում իրականացվող ծրագրերի հաշվետվությունների համար ներկայացվող պահանջներին:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան Գագիկ Ղազինյանը գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց, որ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագիծը շրջանառության մեջ է դրված, և այս փուլում ԵՊՀ-ն պետք է որևէ ձևով արձագանքի և միասնական կարծիք արտահայտի: Նա առաջարկեց ձևավորել աշխատանքային խումբ, որը կմշակի ստացված առաջարկությունները, կամ այդ գործընթացը կազմակերպելու իրավասությունները տալ գիտխորհրդի կանոնադրական հանձնաժողովին, որը ստացված առաջարկությունները համակարգելուց հետո կմշակվի նախագիծ, որի վերաբերյալ խորհուրդը կհայտնի իր կարծիքը և համալսարանը կունենա պաշտոնական դիրքորոշում օրենքի նախագծի վերաբերյալ: Որոշվեց ֆակուլտետներից և համալսարանականներից օրենքի նախագծի վերաբերյալ ստացվելիք առաջարկներն ու նկատառումները քննարկել ԵՊՀ գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովում, կազմել ընդհանրական կարծիք և ներկայացնել գիտական խորհրդի առաջիկա նիստին:

Գիտական խորհրդի նախագահ՝

Գ.Գ. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Լ. Ս. Հովսեփյան

08.01.2020թ.